ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1444 21.08.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հուլիսի 24-ին թիվ 2621/1436 գրությամբ Դիտորդական խումբը խնդրել էր մեկնաբանություն տալ, թե ՀՀ-ն ինչպես է կատարում Խոշտանգումների և անմարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) հանձնարարականը, որը վերաբերվում է ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով (օրը 3 անգամ, իսկ մեկ անգամը՝ տաք) ապահովելուն:

Ի պատասխան մեր գրության, 13.08.2014թ-ին թիվ 2/2-1-1943 գրությամբ, տրվել է մեկնաբանություն, մեջբերում ենք. *<< ՀՀ ոստիկանությունը ղեկավարվում է ՀՀ կառավարության 05.06.2008թ թիվ 574-Ն որոշման պահանջով և անշեղորեն կատարում է <<Խոշտանգումների և անմարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման Եվրոպական կոմիտեի>> պահանջը: Հիշյալ որոշման համաձայն՝ ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող անձանց օրական երեք անգամ (նախաճաշ, ճաշ, ընթրիք) տրամադրվում է անվճար սնունդ (ներառյալ մեկ տաք սնունդ)>>*:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ Դիտորդական խումբը գործում է 2006թ-ից և այդ տարիների ընթացքում կատարել է բազմաթիվ այցելություններ ՀՀ-ում գործող բոլոր ՁՊՎ-ներ օրվա տարբեր ժամերի: Դիտորդական խմբի բազմամյա փորձը, մոնիթորինգների ընթացքում հավաքագրված փաստերը, ինչպես նաև ՁՊՎ-ում պահվող անձանց և վարչակազմի հետ

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

առանձնազրույցները ցույց են տվել, որ միայն ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում է տրամադրվում 3 անգամյա սնունդ (նախաճաշ, ճաշ և ընթրիք, որից մեկը տաք), իսկ ՀՀ-ում գործող մնացած ՁՊՎ-ներում չի ապահովվում: Փաստենք, որ հենց վերջերս կատարած այցելության ընթացքում, ՁՊՎ-ում պահվող անձին ամբողջ օրվա համար տրամադրել էին մեկ վարունգ և մեկ կտոր հաց:

Այսպիսով, Դիտորդական խումբը խնդրում է ևս մեկ անգամ անդրադառնալ թիվ 2621/1436 գրությամբ բարձրացված հարցին (*անվճար սննդով ապահովելու սննդի համար նախատեսված գումարի վերահաշվարկը ինչ սկզբունքերով է իրականացվել և ինչ չափանիշներ են հաշվի առնվել*), ինչպես նաև խնդրում է Ձեր կողմից տրված մեկնաբանությունը հիմնավորել փաստերով:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-2065 «28» 08 2014թ.

Ձեր 21.08.2014թ. թիվ 2621/1444 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու վերաբերյալ Ձեր 24.07.2014թ. թիվ 2621/1436 գրությանը ՀՀ ոստիկանության կողմից 13.08.2014թ. թիվ 2/2-1-1946 (այլ ոչ թիվ 2/2-1-1943) գրությամբ արդեն իսկ տրվել է սպառիչ պատասխան:

Անվճար սննդով ապահովելու համար հաշվարկված գումարի չափի և դրա հաշվարկման հիմք են հանդիսանում մեկ անձին հասանելիք օրական սննդի ձեռք բերման համար ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ սահմանված չափաբաժինները, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա համար ՀՀ ոստիկանության կողմից սննդամթերքի տրամադրման նպատակով հայտարարված մրցույթում հաղթած մատակարարների հետ կնքված պայմանագրային գները:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի կողմից ներկայացված այն հանգամանքին, որ բացի Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ից որևէ այլ ՁՊՎ-ում օրական երեք անգամյա սնունդ չի տրամադրվում, ապա այն չի համապատասխանում իրականությանը:

Դիտորդների խմբի կողմից վերացական ձևով, առանց կոնկրետ ՁՊՎ-ն կամ ձերբակալվածի տվյալները նշելու հայտնվել է, որ ՁՊՎ-ում պահվող անձին ամբողջ օրվա ընթացքում տրամադրվել է մեկ վարունգ և մեկ կտոր հաց:

ՈՒստի առաջարկվում է հաշվետվությունները ՀՀ ոստիկանություն ներկայացնել կոնկրետ փաստերով, այլ ոչ թե ոստիկանությանը հորդորել մեկնաբանությունները ներկայացնել փաստերով, քանի որ ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները տրվում են կատարված ստուգումների, ծառայողական քննությունների, ինչպես նաև կոնկրետ փաստերը հաստատող փաստաթղթերի ուսումնասիրությունների հիման վրա:

ՀՀ ոստիկանության շտաբ